ԱՐՏԱՎԱԶԴ Բ ԵՎ ԱՆՏՈՆԻՈՍ[1]

ՀՐԱՆՏ Ք. ԱՐՄԵՆ (ԱՄՆ).

Մեծն Տիգրանի դավակ Արտավազդ Բ-ի կյանքը ուսումնասիրողը կրնա ավադել, թե անոր թագավորության սկզբին և վախճանին ան գործ կունենա երկու հռոմայեցիներու հետ։ Երկուքն ալ խաթարված նկարագրով։ Առաջինը՝ Կրասոս, վատթար։ Երկրորդը՝ Անտոնիոս, վատթարագույն։

Կրասոս, ոսկիի սիրահար և դայն դիզելու համար միջոցներու մեջ խտրություն չդնող։ Անոր վրա ալ ավելցուր վաթսունն վերջ հաղթական զորապետ մը ըլլալու հանկարծական փառասեր պոռթկում մը, որ կհավատար, թե դինք նոր Աղեքսանդր մը պիտի ըներ։

Իսկ երկրորդը՝ Անտոնիո՞ս։

Հեշտամոլ, կամայական և անբացատրելի քմահաճույքներու ենթակա արևելյան սուլթանի մը նախատիպը։ Զինվորականի միջակ կարողություններուն տեր։

Անձնյա, լայն ճակատ և կեռ քիթ, որ կրնաս տեսնել իր դրամներուն վրա։

Բաղմատեսակ հացկատակ շողոքորթներու կուռքը դարձավ Անտոնիոս։ Հռոմի պարկեշտ և պատվավոր քաղաքացիներ զզվանքով կդիտեին անոր կենցաղավարությունը։

Առաջին կինը կձդեր և կամուսնանար իր եղբոր աղջկան՝ Անտոսիայի հետ։ Ապա բաղմահարուստ Ֆուլվիան իր երրորդ պաշտոնական կինը կըլլար։ Այս կինը կուզեր իշխել իշխողին։ Պլուտարքոս կըսե. «Կլեոպատրան Ֆուլվիային երախտապարտ եղած պետք է ըլլար Անտոնիոսը հնահպատակ ընելուն համար»։ Ֆուլվիան մեռավ 40-ին[2]։ Անոր հաջորդող Օկտավիան՝ քույրը Օկտավիանոսի (ապագայի Օգոստոս կայսրը)—բոլորովին անզոր էր սանձելու, կամ ընտելացնելու, Խորենացիի բառով, «Առյուծանման գազանաբար մռնչացող Անտոնիոսը»։ Ինքզինքը Աղեքսանդր կուզեր ցույց տալ Արևելքի ժողովուրդներուն։ Բայց «Աղեքսանդրին նմանած մինակ բանը խմելիքի սերն էր։ Երկնային այն կայծը, որ միմիայն մեծություններ կրոցավառե, երբեք չփայլեցավ Անտոնիոսի մեջ»։

Բաղդատմամբ Անտոնիոսի այնքան մոլեգին նվիրումին դեպի Կլեոպատրա, վերջնույն սերը սակայն հաշիվով էր։ Այս սրամիտ, փառասեր և խորամանկ կինը մեկ ամենակալ տենչ ուներ՝ զորություն ձեռք ձգել, ամենակարող թագուհիի մը հեղինակությունը ունենալ։ Այս մեկ սևեռումը միտքը կիրք դարձած էր իրեն համար, նույնիսկ դեռատի աղջիկ տարիքին։

Աղջիկը դրավեց Կեսարի սիրտը, եղավ անոր հոմանուհին և Կեսարի միջոցով իր մի եղբոր (որի հետ ամուսնացած էր) հաշիվը մաքրեց, ու իր մյուս փոքրիկ եղբոր հետ հաստատվեցավ դահին։ Կեսարին կոթնած, իր դիրքը ամրացուց ներքին թշնամիներուն դեմ։ Հռոմ մեկնեցավ Կեսարի հետ, երբ Կեսարը սպանեցին, վերադարձավ Եգիպտոս։

Ու ահա Անտոնիոսի տվավ իր սիրտը... հաշիվով։ Կլեոպատրան ավելի մեծ հույսեր դրավ Անտոնիոսի վրա քան Կեսարի։ Այո, Կլեոպատրան համոզված էր, թե Անտոնիոս նոր և հզոր Կեսար մը պիտի ըլլար։ Սա տարբերությամբ, որ մինչ Կլեոպատրան Կեսարի կամակատարը եղած էր, Անտոնիոս կըլլար իր ստրուկը։ Անոր թշնամիները, Կիկերոնն սկսած, արդեն սպանված էին։

Անտոնիոսի հակառակելիք միակ անձը Օկտավիանոսն էր, իսկ այն ալ դեռ այնքան երիտասարդ, արդեն հիվանդոտ մեկն էր և թերևս շուտով մահներ։ Եթե նույնիսկ համարձակեր

---

1 Այս հոդվածը հեղինակի «Անկում Արտաշեսյան հարստության» անտիպ աշխատության մի մասն է կազմում—խմբ.։

2 Բոլոր թվականները մեր թվականեն առաջ են։

3 O. Wertheimer, Cleopatra, 1931.

Անտոնիոսի դեմ պատերազմել, պիտի խորտակվեր այն ուժին առջև, որ Կլեոպատրայի հարբուստությունը և Մեծավոր արևելքի ազգերուն Անտոնիոսի տված զորագունդները պիտի կրնային ամբողջապես հանել։

Ա. ԱՆՏՈՆԻՈՍ ՊԱՐԹԵՎԱՍՏԱՆ ԿԱՐՇԱՎԻ

Պարթևաստանի Որոդ թագավորը իր զավկին և գահաժառանգին՝ Բակուրի կորուստը ողբաց անմխիթար սուգով։ Սակայն քիչ շատ ինքզինքը գտնելուն ստիպված էր գահի հաջորդության համար կարգադրություն ընել։ Ան բազմաթիվ թագուհիներն և հարճերն 30 հատ մանչ զավակ ուներ, որոնցմե ամենեն երեցը իրեն հաջորդ կրնտրեր Հրահատ Դ անունով և ինք գահեն կհրաժարեր։

Հրահատ անագորույն մեկը դուրս եկավ։ Հարճի մը զավակ ըլլալուն, ան սուր նախանձով ելնալեր իր եղբայրներեն անոնց, որոնց մայրը թագուհի էր, մանավանդ այն եղբայրները, որ Կոմմագենի Անտիոքոս թագավորի աղջիկեն ծնած էին։ Հրահատ այս վերջինները սպաննել տվավ։ Երբ հայրը բողոքեց, Հրահատ այն ալ սպաննեց[5]։ Ատով ալ չգոհացած Հրահատ մնացած եղբայրներուն ալ հաշիվը մաքրելն վերջ իր ուշադրությունը դարձուց պարթև ազնվականներուն։ Անոնցմե քանիներ սպաննել տալե վերջ մնացածներեն շատեր փախուստ տվին և հռոմանք ապաստանեցան հռոմայեցիներուն մոտ։ Բարձրաստիճան ազնվական մը, Մոնես անուն, որուն համբավը Պարթևաստանի մեջ հանրածանոթ էր, Անտոնիոսին եկավ և համոզեց զայն որ հարձակման հարմարագույն ժամը հասած էր այժմ երբ երիտասարդ բռնակալը պարթևներուն ատելի դարձած էր իր վայրագություններով։ Մոնես բսավ թե ինք պատրաստ էր հռոմեական բանակի առջևը ինկած առաջնորդելու Պարթևաստան, ուր Անտոնիոսի կսպասեր դյուրին հաղթանակ մը։

Պարթևաստանի վրա մեծ արշավանքի մը Հուլիոս Կեսարյան ծրագիրը վերադարթնեց Անտոնիոսի մտքին մեջ։ Արդեն Հռոմի քաղաքական շրջաններու մեջ շարունակ խոսքը կար Պարթևաստանի հետ չափվելու, մինչ ամբոխավարներ Կրասոսի պարտության վրեժը լուծելու ճառերով կդրդռեին ժողովուրդը։

Պարթևաստանի անբավ հարստությունը կողոպտելու խայծը մեկ կողմեն, հետո, որպես նոր Աղեքսանդր մը, հաղթական հռոմեական բանակ մը Բակտրիա և Հնդկաստան առաջնորդելու շլացուցիչ հեռանկարը մյուս կողմեն, Անտոնիոսի մտքեն վաննցին ամեն տատամսում։ Ան նաև կդիտակցեր նման հաղթանակի մը Հռոմի մեջ իրեն ի նպաստ ստեղծելիք ահագին ազդեցության, որը պիտի ծառայեր այդ ամբարտավան երիտասարդ Օկտավիանոսի հեղինակությունը կոտրելու։ Իսկ Մոնեսին ալ հայտնվիլը կարծես պատերազմի աստուծո կողմե իրեն եղած եղակի շնորհք մըն էր, որ դրավակներ պիտի ըլլար արագ և դյուրին հաղթության, քանզի պարթևներու աչքին Մոնեսի վարկը այնքան բարձր էր, որ անոնք սիրով պիտի ընդունեին զինք որպես թագավոր քան Հրահատը։

Մոնեսին որքան ազդեցիկ մեկը ըլլալը անկե հայտնի է, որ իր փախուստը երկյուղի մատնեց Հրահատը և ան անմիջապես բանակցություն սկսավ Մոնեսի հետ զինք վերադարձնելու։ Զիջումներ և խոստումներ Մոնեսը համոզեցին։ Ան Անտոնիոսին բսավ թե իր ետ երթալը ավելի օգտակար պիտի ըլլար հռոմայեցիին քան մնալը։ Անտոնիոս չհակառակեցավ։ Մոնեսը բռնի իր մոտ պահելը կրնար իրեն դեմ հանել հռոմայեցիներու համակիր պարթևները։ Անտոնիոս Մոնեսի հետ իր դեսպանները ղրկեց Հրահատին, որ խաղաղությամբ իրենց վեճը կարգադրեն՝ Կրասոսեն առնված հռոմեական դրոշակները և գերի զինվորներեն ապրողները վերադարձնելով[6]։

Բայց ինչ ալ ըլլա, Անտոնիոս վճռած էր իր մեծ արշավանքը ի գլուխ հանել։ Կրասոսի օրերեն ի վեր հռոմայեցիք այլևս ծանոթացեր էին պարթևներու պատերազմելու մեթոդին։ Անտոնիոսի տեղակալ Վենտիդիոսին երկու անգամ պարթև բանակներ ջախջախելը ցույց կուտար, որ պարթևները կարծվածին չափ անպարտելի չէին։ Անտոնիոս՝ Վենտիդիոսի նախանձելուն պաշտոնանկ բրած էր զայն։ Դալիք զինվորական հաղթանակի ամբողջ պատիվը իրեն պիտի պատկաներ և այդ որքան պիտի բարձրացներ իր վարկը Կլեոպատրայի աչքին։

Ան անմիջապես սկսավ պատրաստության։ Իր բանակը Կրասոսիենն շատ ավելի մեծ և ուժավարթիվ պիտի ըլլար։ Կրասոսի 40 000-ի տեղ՝ 100 000։

---

[4] Justin. XLIII, 4, 12–13.
[5] Dion Cassius, XLIX, 23. Plut, Crassus, 33.
[6] Dion Cassius, XLIX, 24.

Կրասոսի արշավանքեն վերջ Արտավազդ և Որոդ թագավորներու միջև կնքված դաշինքը երկուստեք պահպանված էր 15 տարիներ ի վեր։ Հայ արքան կգիտակցեր, թե իր իշխած Հայաստանը թեև հարուստ և հզոր, սակայն չէր իր հոր՝ Մեծն Տիգրանի կայսրությունը։ Ան գիտեր, թե իր երկու դրացիները, Պարթևաստան և Հռոմ, զատ-զատ իրմե շատ ավելի զորավոր էին։

Այժմ հանկարծ, տասնյոթ տարի վերջ, ան ինքզինքը կգտներ սարսափելի անելի առաջ, և երկյուղալի հարցումը—որ հետ այնու ամեն պարթև-հռոմեական պատերազմին հայ արքունիքի մղձավանջը պիտի ըլլար—անվերջ կկրկնվեր իր մտքին. Ո՞ր կողմը։

Չենք գիտեր թե Արտավազդ ի՞նչ վերաբերում ունեցավ պարթև նոր թագավորին հանդեպ։ Բայց ան որոշեց գալիք մեծ պատերազմին չեզոք մնալ։ Ինք, որ անցյալին սիրահոժար Յյուրիա գացած էր բազմահազար սպառազեն ձիավոր թիկնապահներով այցելելու Կրասոսին և հսկա զինվորական օժանդակ ուժ տրամադրելու անոր, Կրասոսի ամբողջ բանակի մեծությամբ հայ բանակ, 40 000-ի դեմ՝ 40 000, պայմանով, որ Կրասոս ընթանար Հայաստանի մեջեն, հիմա, Անտոնիոսի պարագային, ան տեղեն չի շարժեցավ։ Հայաստանի շահուն—ապահովության համար չեզոքությունը ավելի բարենպաստ համարեց։ Կրասոսի արշավանքեն սորված դասը այն էր, թե մեկ կամ մյուս կողմին հարիլ՝ հետագային վտանգ հրավիրել էր իր դլխին։

Հայտնի էր, որ հաղթանակները որքան ալ կատարյալ ըլլային՝ նույնիսկ բանակ մը ամբողջությամբ բնաջնջվեր, ինչպես Կրասոսինը, անոնք սակայն չունեին այն վճռական բախտորոշ բնույթը, որով պարտված կողմը ալ քանի մը սերունդ անկարող կըլլա իր գլուխը բարձրացնելու։

Եթե Արտավազդ հռոմայեցիին զինակցեր և հաղթական ալ դուրս դար, վստահ չէր թե հաջորդ անդամ պարթևը իր վրա հարձակելուն հռոմայեցիք իր օգնության պիտի հասնին։ Իսկ եթե պարթևին միանար, Արևելք եկող ամեն հռոմայեցի զորավարի հարձակման առաջին թիրախը պիտի ըլլար։

Ուրիշ ի՞նչ միջոց կար իրեն։ Չեզոք մնալ։ Պետք է փորձեր այդ ալ։

Բայց, այս պարագային, Անտոնիոս իրեն պիտի պարտադրեր փոխել իր որոշումը։

Հռոմայեցիի առած ռազմական առաջին քայլերուն հետևելն առաջ կուզեմ նախ անդրադառնալ հայ թագավորի դեմ կարդ մը պատմաբաններու, հին և նոր, աժան մեկ ամբաստանությունը քննելու։

Արտավազդ թագավոր կամբաստանվի Անտոնիոսի դավաճանելու հանցանքով։ Իբր թե հայ արքան համոզած ըլլա Անտոնիոսը Հայաստանի մեջեն անցնելու, հայ օգնական դումարտակներով, և թշնամիին հետ առաջին բախումեն վերջ Արտավազդ իր զորքերը հետը առած կքաշվի իր երկիրը ու այդպեսով պատճառ կըլլա Անտոնիոսի պարտության։

Հռոմայեցիին Ատրպատական արշավելը մեծ սխալ մ՚էր, կրսեն, և ան այդպես ըրավ Արտավազդի թելադրությունեն խաբված[7]։ Մոմզեն կզարմանա, թե ինչու Անտոնիոսը այդ ճամփան ընտրեց երբ հռոմայեցիներու բոլոր արշավանքները, թե՛ նախկին, և թե՛ հետագա, Եփրատի ճամփով կըլլային դեպի Տիգրոն։

Բայց Անտոնիոսեն առաջ, բացի Կրասոսի հարձակումեն, հռոմայեցիներ նման մեծ արշավանք ունեցած չէին Պարթևաստանի դեմ, որ Տիգրոնի ճամփան ընտրած ըլլար։ Իսկ Անտոնիոսեն վերջ պատահած հռոմեական արշավանքներուն, հաջորդ 400 տարիներու ընթացքին, Եփրատի ափն ի վար ընթանալը կրացատրվի անով, որ Կրասոսի ճամփան վտանգավոր էր անապատային երկրամասեն անցնելուն, իսկ Հայաստանն ալ Անտոնիոսեն զրեթե դար մը վերջ կմտներ պարթև Արշակունիներու ծիրին մեջ։

Արտավազդի դեմ այս դավաճանության հեքիաթը կրկնողներ ուսկի՞ց կառնեն իրենց տեղեկությունը։ Եթե իրենց մեկնաբանության արդյունք չէ, անտարակույս կհետևին Ստրաբոնի բսածին։ Եվ այս պարագային Ստրաբոն իր բառերը չի ծամծմեր հայ թագավորի դավաճանության մասին։ Կարդանք Ստրաբոնի գրածը. «Անտոնիոսի արշավանքը իր բանակը տագնապի ենթարկեց, ոչ թե երկրամասի դիրքեն, այլ իրենց առաջնորդ Հայաստանի թագավոր Արտավազդի վարմունքեն, որուն Անտոնիոս խոլաբար իրեն խորհրդական առավ, և պատերազմի մասին անոր նպատակներուն ծանոթացած, միաժամանակ այդ իշխանը (Արտավազդ) դաղտնարար կծրագրեր անոր խորտակումը։ Անտոնիոս պատժեց Արտավազդը, բայց շատ ուշ»[9]։

---

[7] Bouche Leclerq, Histoire des Lagides, 1906, vol. II, 258; Rawlinson, Parthia, 201.

[8] T. Mommsen, Roman Provinces, II, 30.

[9] Strabo, XI, 13, 4.

Ո՞վ է Ստրաբոնին աղբյուրը այս տեղեկության համար։ Դելլիոս։ Ո՞վ էր Դելլիոս։ Անտոնիոսի ցոփության ընկերը, որ արշավանքին կմասնակցեր որպես գունդի մը հրամանատար, և հետո աչ պատմություններ գրեց ձախողած արշավանքին։

Եթե Արտավազդ որոշած ըլլար խորտակել հռոմեական բանակը, որքան դյուրին բան էր իրեն համար իրագործել այդ, երբ Անտոնիոսի բանակը պարտված և սովալլուկ կվերադառնար Հայաստան։ Մինչև վերջին հռոմայեցի զինվորը կրնար սպանել տալ, մեջը ըլլալով Անտոնիոսը։ Արտավազդ նման բան ոչ թե չըրավ, այլ անոնց պաշար հայթայթեց և թույլ տվավ որ անոնք ձմեռը անցնեն Հայաստանի մեջ։

Արտավազդի դավաճանության խոսքը ընող պատմաբաններ կամ նեղություններ հանձն չեն առներ հանգամանորեն ուսումնասիրելու և վերլուծելու հարակից պարագաները և վկայությունները, Արտավազդի խնդիրը երկրորդական համարելով, և կամ իրենց կենսագրած Անտոնիոսը աստիճանացնելու մտոք առաջ կքշեն դավաճանության անհիմն վարկածը, որպեսզի երբ վերջն Անտոնիոս դավով ու խարեբայությամբ Արտավազդը և իր ընտանիքին քանի մը անդամները ձերբակալե, կատարված այս քստմնելի արարքը այնքան ալ դատապարտելի և սև չերևա, այլ Ներկայացվի դավաճանի դեմ պատժական քայլ։

Մենք ուշադրություններ մյուս հին աղբյուրներու դարձնելուս, ինչ որ պարտինք ընել, կտեսնենք, թե Դիոն Կասսիոս, Ցլորոս և Վելլեոս Պատերկուլոս ոչ մեկ հիշատակություն ունին հայ-հռոմեական զինակցության մասին։ Եթե Պլուտարքոս համառոտակի կհիշե Արտավազդի օժանդակ գունդեր տալը և ապա ետ քաշելը, մոռնալու չենք, որ Պլուտարքոսին ալ աղբյուր ծառայած էր Դելլիոսի գրած արշավանքի պատմությունը, թեև կտեսնենք թե Պլուտարքոս Դելլիոսի ամեն ըսածը ճիշտ տված չէ ինչպես Ստրաբոն։

Այս մասին միակ կարևոր տեղեկությունը Դիոն Կասսիոսի հաղորդածն է, որ կրսե, թե հայ թագավորը ներկա չէր պատերազմին, թեև «երբ կրնար օգնել հռոմայեցիներուն, ինչպես ոմանք ենթադրեն, ոչ օգնեց, ոչ ալ Անտոնիոսին միացավ, այլ քաշվեցավ իր հայրենիքը»[10]։ Բառերը զոր ստորագծենք, «ինչպես ոմանք կրսեն», ցույց կուտան հռոմայեցիներու կողմն օգնության ակնկալություն մը, քան թե զինակցության դաշինք մը հայ թագավորի և Անտոնիոսի միջև։

Դավաճանության խոսք ընողներ հավանաբար այսպես կվերլուծեն։ Կրասոսի օրով Արտավազդ ինքը առաջարկեց, որ հռոմեական բանակը Հայաստանեն անցնելով հարձակի Պարթևաստանի վրա, խոստանալով ահագին օգնական զորք տալ Կրասոսին։ Հիմա որ Անտոնիոս հայ հողերու մեջեն անցնելով գնաց Թշնամիին վրա, ուրեմն, կեղրակացնեն անոնք, անպատճառ Արտավազդը այս անգամ ալ կրկնած ըլլալու էր միևնույն առաջարկը, և հռոմայեցին ընդունելն վերջ, հայը դավաճանեց անոր։

Անտոնիոս հյուսիսային ճամփան կընտրեր ոչ թե Արտավազդի թելադրությամբ, այլ ան հյուրացներ Հուլիոս Կեսարի ծրագիրը։ Ինչպես գիտենք, Կեսար մեծամեծ պատրաստությամբ ծրագրած էր պարթևական արշավանքը։ Ան իր բանակը պիտի անցներ Փոքր Հայքեն։ անտարակույս ուսումնասիրած ըլլալով Կրասոսի ձախողանքը՝ Կեսար իր զինվորական գործողություններու մեջ միշտ կջանար ծանոթանալ երկրամասին, ուսկե պիտի անցներ, կամ ուր պիտի գովեր[12]։

Կրնանք նույնիսկ ըսել, թե հայ-ատրպատականյան շարունակական սահմանային վեճերու պատճառավ Արտավազդ բաջածանոթ էր տույն երկրամասին և Կեսար Փոքր Ասիա գտնված պահուն, կամ Հայաստանի դրացի Պոնտոս ժամանելուն, առ այդ կարևոր գիտելիքներ ստացած կրնար ըլլալ նույնինքն Արտավազդեն։

Անտոնիոս Կեսարի հավատարիմ գործակիցը և տեղակալը եղած էր։ Կեսարի սպանման տարին, 44-ին, անոր հետ միասին կոնսուլ էր, մինչ Կեսար պարթևական պատերազմի պատրաստություններ կտեսներ։ Կեսարի սպանումեն վերջ անոր թուղթերը ինք առած էր Կեսարի տյրիեն։ Կարելի չէ երևակայել, թե այսքան իրարու մոտ գործակիցներ, զույգ կոնսուլներ, Անտոնիոս անտեղյակ ըլլար Կեսարի զինվորական ծրագրին։ Որ այդ շատ լավ գիտեր (այսինքն՝ արշավանքը կատարել Հայաստանի մեջեն) կասկածի տեղի չի ձգեր երբ տեղեկանանք Անտոնիոսի նախնական քայլերուն՝ գալիք մեծ արշավանքի։

---

[10] Dion, XLIX, 26, 1.
[11] Seutonius, Caesar, 44.
[12] Նույն տեղում, էջ 53։

Պարթևաստանի վրա հարձակումը վերջնականապես որոշելուն Անտոնիոս իր կարող զորապետներեն Կանիդիոսը մեծ բանակով մը Հայաստան ղրկեց։ Մերձավոր արևելքի մեջ Անտոնիոս իր զինվորական հաջողությունները կպարտեր այն բախտավոր իրողության, որ ձեռքին տակ ունեցած էր կորովի, ձեռներեց և ռազմագետ հրամանատարներ, ինչպիսին Վենտիդիոս, որուն հաջողությունը Անտոնիոսի նախանձը շարժած էր, և Կանիդիոս։

Կանիդիոս որպես զրոսաշրջիկ չէր գար Հայաստան, այլ ստիպելու (բռնադատել բառը ավելի ճիշտ է երբ մեծ բանակ մը հետդ բերած ես) Արտավազդը, որ հռոմայեցիներու զինակից դառնա։ Կերևի սկզբնական թղթակցություններու կամ բանակցությանց միջոցին Արտավազդ հայտնած էր իր չեզոք մնալու որոշումը։

Կանիդիոս ապա կարշավեր Վրաստան և Աղվանք և զինու զորությամբ իր ուզած տեղը կբերեր զանոնք[13]։

Սա նախազգուշական քայլ մ'էր Անտոնիոսի կողմե ապահովելու իր թիկունքը։ Կեսարի վայել քայլ մը և, անտարակույս, Կեսարի ծրագրեն ընդօրինակված։ Կեսար Փոքր Հայքեն ընթանալով ի սկզբան պիտի խուսափեր թշնամիի հետ վճռական ճակատամարտե մը, այլ նախնական գործողություններով պիտի չափեր պարթև ուժը[14]։ Կակնկալես որ այսպիսի զգույշ հրամանատար մը Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վերաբերմամբ առներ սկզբնական այն քայլը, զոր ահավասիկ Անտոնիոս կառներ Կանիդիոսի միջոցավ՝ զինու զորությամբ բռնադատել հյուսիսային այս ազգերը, որ գալիք մեծ պատերազմին հռոմայեցիներուն հետ ըլլան։

Արտավազդ չընդդիմացավ Կանիդիոսի։ Կովկասյան երկու երկիրներու մեջ՝ Վրաստան և Աղվանք, հռոմեական լեգեոններու ներկայությունը կհարկադրեր Արտավազդ թագավորին չընդդիմանալ Կանիդիոսի։ Եթե չհամակերպեր, այդ պարագային Արտավազդ ինքզինքը պիտի գրտներ երկու հռոմեական բանակներու միջև, հյուսիսեն՝ Կանիդիոս, հարավեն՝ Անտոնիոս։

Հետևաբար Արտավազդ խոստացավ զինվորական օժանդակ ուժ։ Ան գիտեր, թե Անտոնիոս հսկայական բանակի մը գլուխ անցած էր, 100 000, որը երբ բաղդատես Կրասոսի 40 000-նոց բանակին, իրապես ահագին ուժ մը կներկայացներ։ Այս անգամ հռոմայեցիներու հաղթությունը հավանական էր մեծ չափով։ Եվ այդ նկատի առնվելիք ծանրակշիռ պարագա մ'էր, եթե չեզոք մնալ որոշած էիր։

Որ Արտավազդի խոստումը ակամա էր և հարկադրված, հայտնի է իր տված օգնական զորքեն։ Այն Արտավազդը, որ հոժարակամ Կրասոսի ունեցած ամբողջ զորքի թվին հավասար քանակ մը կտրամադրեր՝ 40 000, Անտոնիոսի կխոստանար 13 000[15]։

Արտավազդի դրությունը իրապես մտահոգիչ էր երբ Կանիդիոս զինակցություն կառաջարկեր։ Հայ թագավորին դավաճանական արարք վերագրող պատմաբաններ նկատի չեն առած ուրիշ կարևոր պարագա մը։ Այդ Անտոնիոսի թշնամի Օկտավիանոսի գործունեությունն էր։ Այս վերջինը պրոպագանդային հսկա աշխատանքի լծված էր ոչ միայն հռոմայեցիները իր կողմը շահելու, այլ նաև օտար ազգերը։

Օկտավիանոսի գաղտնի բանագնացները Արտավազդի մոտ եկած էին զգուշացնելու հայ թագավորը Անտոնիոսին որևէ օգնություն տալեն[16]։ Արտավազդի համար հարցը չափազանց կկնճռոտեր, ոչ միայն պարթև թագավորի և Անտոնիոսի միջև գիրք բռնելու երկընտրանքը կշարշարեր իր միտքը, այլ նաև Անտոնիոսի և Օկտավիանոսի։ Այլևս հայտնի էր, թե այս երկու հռոմայեցի առաջնորդներ պատերազմի պիտի բռնվեին իրարու դեմ, ինչպես 12 տարի առաջ (48-ին) Պոմպեոս և Կեսար։

Արտավազդ գիտեր նաև, թե ինչպես հաղթողը կրնար պատժել այն օտար թագավորը կամ իշխանը, որ պարտվածին օգնած էր։ Դեռ թարմ էր հիշատակը Կապադովկիո թագավորին, որուն սպանել տված էր Անտոնիոս, քանզի ան Կասսիոսի օգնած էր Անտոնիոսի դեմ։ Իսկ Հայաստանի հարստությունն ալ հավելյալ խայծ մ'էր հաղթող հրամանատարին Արտավազդը պատժելու, եթե ան սխալ մարդու օգնած էր։

Չենք գիտեր թե շվարած հայ թագավորը ինչ պատասխան տվավ Օկտավիանոսին, ինչպես նաև Պարթևաստանի նոր թագավոր Հրահատի դեսպաններուն, որոնք անտարակույս Արտա-

[13] Dion, XLIX, 24. T. R. Holmes, Architect of Roman Empire, 122.
[14] Seutonius, Caesar, 44.
[15] Plut., Ant., 27.
[16] Dion, XLIX, 41, 5.

վաղդին հիշեցուցած էին իր բարեկամական դաշինքը Որոդ թագավորին հետ, որուն մինչև այդ երկուստեք հավատարիմ մնացած էին։

Գիտենք սակայն, որ Արտավազդ իր նախընտրած շեղոքությունը չէր կրնար պահել։ Կանիդիոս այդ անկարելի դարձուցած էր։ Ուստի ակամայս օժանդակ զորագունդ մը կուտար Հռոմայեցիին։

Անտոնիոս 36-ի դարնան ճամփա ելավ Սյուրիայեն։ Հունիսին Կարնո մոտ հավաքված իր հսկա բանակը աչքե անցուց։

Հրահատ թագավորն ալ իր դունդերը կհավաքեր և դաշնակիցներ ճարելու ետևե կըլլար։ Անոր գլխավոր դաշնակիցն էր Մարական Ատրպատականի թագավորը, որուն անունն ալ Արտավազդ էր։ Այս պարագան ծանոթ ըլլալուն հայ թագավորին, ան թելադրեց Անտոնիոսին որ արշավե Ատրպատական և դրավե ատոր մայրաքաղաքը։

Հայկական և մարական արքունիքներ տարիներով իրարու թշնամի էին հողային վեճերու պատճառավ։ Իսկ Ատրպատականի ներկա թագավորին՝ մար Արտավազդի ատելությունը դեպի հայ Արտավազդ ավելի շեշտված բնույթ ուներ։

Մար Արտավազդը հավանարար հայ Արտավազդի քրոջ որդին էր։ Մեծն Տիգրանի օրով Ատրպատականի թագավորը Միհրդատ անունով մեկն էր, որ ամուսնացած էր Տիգրանի դուստրերեն միուն հետ։ Եթե թագավորներու բազմակնության պարագան չըլլար, որոշապես կրնանք ըսել, թե մար Արտավազդը այս հայ իշխանուհին դավակն էր, որ մի կամ այլ պատճառով կատեր իր մորեղբայրը։ Ատելության շատ պատճառներ կրնար ունենալ, նայած խառնվածքին։ Մշտական սահմանային հողերու վեճեն զատ ան կրնար նախանձած ըլլալ հայ արքային անոր իմաստության, կամ հարստության, կամ ավելի մեծ երկրի մը վեհապետը ըլլալուն, կամ իր դրամներուն վրա «արքայից արքա» տիտղոսը ունենալուն։ Ինչ պատճառ ալ եղած ըլլա, երկու Արտավազդներու փոխադարձ ատելությունը կրնանք ընդունիլ որպես պատմական իրողություն։ Եվ եթե կանգ առի մար Արտավազդի ատելությունը շեշտելու, պատճառը այն է, որ ողբերգական անդրադարձում պիտի ունենար հայ թագավորի բախտին։

Արտավազդ կամբաստանվի, որ մար Արտավազդը պատժելու համար Անտոնիոսին համոզեց Ատրպատական արշավելու։ Հայ թագավորի այս խորհուրդը կամ թելադրությունը (եթե երբեք ըրավ) ռազմագիտական տեսակետե անքննադատելի էր և կպատշաճեր Հուլիոս Կեսարի ծրագրին։ Կեսար իր արշավանքը կատարելուն պիտի խուսափեր մեկ վճռական ճակատամարտով վտանգելե իր բանակի բախտը, այլ մեկեն ավելի զինվորական գործողություններով նախ պիտի ծանոթանար թշնամիի ուժին։ Ի՞նչ ավելի ձեռնտու և հարմար էր քան հարձակիլ թշնամիի գլխավոր դաշնակցին՝ Ատրպատականի։

Անտոնիոս հյուսիսային գիծը ընտրելե վերջ իր ճամփեն դուրս ելած չէր ըլլար Ատրպատական մտնելով, և զուր է հայ թագավորի վրին փաթաթել երեկայական մեղք մը Անտոնիոսի պարտությունը չքմեղելու համար։ Անտարակույս Արտավազդ արքան շահավոր պիտի ելլեր մար Արտավազդի պարտությամբ, բայց այդ միակ նկատումը չէ, որ ան կրնար պարտադրել հռոմայեցի զորապետին որդեգրելու մինչև այդ իբր թե իր ծրագրած ռազմագիծեն տարբեր և ատոր հակոտնյա քայլ մը։

Այսպիսի հսկայական արշավանքի համար Կեսարի ծրագիրը յուրացնել մեկ բան է, իսկ բոլորովին ուրիշ բան՝ զայն գործադրության դնել։

Անտոնիոսի առաջին մեծ սխալն էր՝ աճապարանք։ Պլուտարքոսի բառերով՝ «Ամեն բանեն առաջ, իր գործն էր Հայաստանի մեջ ձմեռել և իր բանակին հանգիստ տալ, որ հոգնած էր 8000 սթատիա քալելե վերջ, և դարնան սկիզբը, դեռ պարթևները իրենց ձմեռնային կեդրոններեն չի շարժած գրավել Մարաստանը։ Անտոնիոս չի սպասեց, այլ անմիջապես իր բանակը առաջնորդեց, Հայաստանը ձախին ձգած և հասավ Ատրպատական»[17]։

Ինչո՞ւ կաճապարեր Անտոնիոս։ Այս մեկ պարագային սակայն, Դելֆիոսի հետևելով զինը պաշտպանողներ, հին թե նոր, հայ արքան չեն պախարակեր։

Անտոնիոսի անհամբերությունը երկու գլխավոր պատճառի կարելի է վերագրել։ Առաջին, Իտալիայեն հասնող լուրերը մտահոգիչ էին իրեն համար։ Այլևս հայտնի էր, որ Անտոնիոս և Օկտավիանոս պիտի պատերազմեին։ Արդեն երկուքի հարաբերությունները միշտ լարված էին

[17] Plut., Ant., 38.

Կեսարի սպանութենեն վերջ, և Օկտավիայի ջանքերը իր եղբայրը և ամուսինը հաշտեցնելու ապարդյուն անցած էին։

Անտոնիոս դալիք մեծ պայքարի համար պատրաստվելու էր, որ պիտի վճռեր Հռոմեական կայսրության բախտը։ Փոքր Ասիան արդեն կողոպտած էր։ Անդին կար Պարթևաստան՝ իր անբավ հարստությամբ, որ մինչև այդ ոչ մեկ հռոմայեցի զորապետ կողոպտված էր։ Վճռական հաղթանակով մը ձեռք պիտի բերեր հարուստ ավար, բազմահազար պատերազմական գերիներ, որոնց վաճառումեն պիտի ստանար վիթխարի դումարներ։ Ատոր վրա ավելցուր նաև, որպես հաղթողի, օգնական զորագունդեր ճարելը Մեռձամոր արևելքի թագավորներեն՝ Օկտավիանոսի հետ իր ունենալիք պատերազմին համար, ինչպես Պոմպեոս ստացած էր՝ Կեսարի դեմ իր պայքարին։

Անմիջական հաղթանակ մը Պարթևաստանի վրա անհետաձգելի էր։ Ադկե վերջ, Մեծն Աղեքսանդրի նման Հնդկաստան արշավելը քանի մը տարի կրնար ուշացնել, մինչև Օկտավիտոնոսը ջախջախելը։

Երկրորդ պատճառ Անտոնիոսի փութկոտության, շուտով Կլեոպատրայի մոտ վերադառնալու տենչն էր։ Կլեոպատրան այլևս իր հոմանուհին չէր, այլ ամուսնացած կինը. արշավանքի սկսելե առաջ Անտոնիոս պաշտոնապես կամուսնանար Կլեոպատրային Անտիոքի մեջ, սարքելով զեղխ խրախճանքներ։ Հնարամիտ Կլեոպատրան իրեն հատուկ կերպերով կստիպեր Անտոնիոսը կընքելու այս ամուսնությունը, ամրապնդելու իր դիրքը։

Արշավանքը սկսելե վերջ Անտոնիոս գործեց երկրորդ աղետաբեր սխալը, որ դարձյալ արդյունք էր իր անարդարանալի աճապարանքին։

Ան Արտավազդ արքայեն իմացած էր, որ Ատրպատականի թագավորը իր բանակով մեկնած էր միանալու պարթև թագավորին։ Կարծես ոսկեղեն պատեհություն մը պիտի փախցներ, եթե ժամ առաջ չի հասներ գրավելու Ատրպատականի մայրաքաղաքը Ֆրաասպա (Թախտ ի Սուլեյման)։ Հետևարար Անտոնիոս, որպեսզի իր ընթացքը չի դանդաղի, պաշարման մեքենաները, որ 300 բեռնատար կառքեր կտանեին, հանձնեց իր հրամանատարներեն Ստադիանոսի, և անոր 10000 զինվոր ալ տվավ սույն կարավանը պաշտպանելով բանակի ետևեն հասցնելու, մինչ ինք շտապեց հառաջ։

Պարթև Հրահատ թագավոր կիմանար հռոմեական բանակի պաշարման մեքենաներու ետև մնացած կարավանի մասին։ Ան և մյուս Արտավազդը գիտեին, թե մայրաքաղաքը երկար կրնար դիմադրել Անտոնիոսի պաշարումին, թե՛ անառիկ դիրքին և թե՛ ստվարաթիվ պահակազորքին պատճառավ, ուստի քալեցին Ստադիանոսի վրա։ Հանկարծական հարձակումով անակնկալի բերին զինք, և ինք ու իր զինվորներն գրեթե բոլոր կոտորվեցան, ողջ մնացողներ գերի բռնվեցան, որոնցմե մին էր Պոնտոսի թագավոր Պոլեմոն[18]։ Անտոնիոս երբ օգնության հասավ, դիակներու հանդիպեցավ։

Հայ թագավորը պատահածը իմանալուն, «Հռոմայեցիներու հաջողության մասին հույսը կտրեց և իր վաշտերով հեռացավ»[19]։ Դիոն Կասսիոս կգրե, թե հայ թագավորը ներկա չէր այս պատերազմին, այլ քաշվեցավ իր երկիրը։ Ահա այս եղելութենեն Արտավազդ թագավորի դավաճանության հեքիաթը հարմարցուց Դելլիոս, անկե ալ Ստրաբոն, մինչև մեր օրերը։

Այսպես մտածողներ կմոռնան, թե Արտավազդ անկախ երկրի մը թագավորն էր, որուն առաջին և գերագույն պարտականությունն էր պահպանել երկրի ապահովությունը և անկախությունը։ Իր չեզոքությունը խախտելու բռնադատված, երբ ան տեսավ թե Անտոնիոսի ոգմավարությունը ձախողանքի կդիմե, ան ինքզինքը և իր երկիրն ալ հռոմայեցիի ետևեն կորուստի պիտի չի տաներ։

Անտոնիոս պաշարեց Ֆրաասպան։ Հիմա ա՛լ ավելի պատճառ ուներ աճապարելու, որովհետև եթե պաշարումը երկար տևելով ձմեռը վրա հասներ, իր բանակին կացությունը իրապես հուսահատական պիտի ըլլար։

Պաշարման մեքենաները խորտակված ըլլալուն Անտոնիոս ստիպվեցավ հողաբլուրներ բարձրացնել քաղաքի պատերուն դիմաց։ Շատ չանցած սենդեղենի նվազումը մեծ տագնապի մատնեց զինք։ Շրջականներեն պաշար հավաքելու համար խումբեր ղրկեց։ Եթե այս խումբերը սակավաթիվ անձերե կազմված էին, պարթև հեծելազորաց թռուցիկ վաշտեր կկոտորեին զանոնք։

[18] Plut., Ant., 38; Dion, XLIX, 25.
[19] Plut., Ant., 39.

Թթե պաշարահավաքները բազմաթիվ էին, այդ ատեն քաղաքի զորքերեն դուրս կխուժեին և պաշարման համար հռոմայեցիներու կառուցվածքները կկործանեին։

Աշունը կմոտենար։ Անտոնիոսի դժվարությունները կրազմապատկվեին։ Վերջապես, Դիոն Կասսիոսի բառերով՝ «Թեև ինքը պաշարողն էր, բայց պաշարյալներու բոլոր տաղնապները կտառապեր»։

Ան փորձեց բանակցության մտնել, գոնե Կրասոսեն առնված դրոշակները և զինվորական գերիներեն վերապրողները ստանալով նետ դառնալու առաջարկով։ Իզուր։ Ճարահատ նահանջելու հրաման արձակեց։

Նահանջը դեպի Արաքս անպատմելի նեղություններ պատճառեց. պաշարի պակաս, ջուրի պակաս, կլիմայի խստություն, հիվանդություններ, և վերջապես թշնամիի զարկ-փախիր հարձակումները շարունակ զոհեր խլեցին հռոմայեցիներեն։ Այս նահանջի ընթացքին սակայն Անտոնիոս կարծես պահ մը տոզորվեցավ մեծ զինվորական առաջնորդի մը վայել սրտոտ քաջությամբ (իր այլասերած նկարագրին միակ գնահատելի դրվագը). տասնութ անգամ թշնամիին հետ բախելով, Ցրաասպան ձգելեն 27 օր վերջ անոթի, հիվանդ և ուժասպառ հռոմեական բանակը հասավ Արաքս գետը։

Այս ձախող արշավանքի կորուստն էր 20000 լեգեոնականներ և 4000 ձիավոր, որոնցմե կեսեն ավելի մեռան հիվանդություններեն[20]։ Երբ զինվորները Արաքսը անցան և Հայաստան մտան, «կարծես,—կըսե Պլուտարքոս,—ծովեն ցամաք տեսած ըլլային, ողջունեցին այդ և ուրախության արցունք թափելով գիրար ողջագուրեցին»։

Կտարվիս մտածելու, թե եթե Դելլիոսի և Ստրաբոնի բսածին համեմատ Արտավազդ «միաժամանակ գաղտնի կծրագրեր Անտոնիոսի բնաջնջումը», մի՞թե ավելի հարմար պատեհություն կրնար ունենալ քան հիմա։ Կամ արգիլելով հռոմեական բանակի Արաքսը անցնիլ և թշնամիին բնաջնջվիլ, և կամ անցնելե վերջ կոտորելու անոթի և ուժասպառ զինվորները, մեջն ըլլալով Անտոնիոսը և Դելլիոսը։

Հռոմեական բանակը դեռ նահանջի ճամփուն՝ Արտավազդի դեմ մեղադրական բառեր բերնե-բերան կթռչեին։ Եթե հայը մեզ հետ մնար, այս փորձանքը մեր գլխուն չէր գար։ Ուրեմն հայն է մեր բոլոր դժբախտություններուն պատճառը և Անտոնիոս պետք է պատժե զայն։ Իրենց պարտության համար ուրիշներ պատասխանատու բռնելու այլևս սովորություն դարձած հռոմեական չքմեղանքը այս սովահար բանակի ջղայնացած զինվորները պահ մը կսփոփեր[21]։

Սակայն Անտոնիոս դեռ ակնկալելիք ուներ Արտավազդեն, ուստի պահ մը լռեցուց իր զինվորներուն հակահայ արտահայտությունները։ Ան զինվորներուն դրամ պարտք ուներ, և այդ տեղն մը պետք է ճարվեր։ Արտավազդ և իր աշխարհը հարուստ էին։

Անտոնիոս հայ արքային մոտ դնաց։ Իր բերնեն մեղր ու շաքար կթափեր Արտավազդի հասցեին։ Դերը լավ սերտած վարժ դերասանի մը արվեստով իր ժպտուն շողոքորթություններ անկեղծ մտերմության ջերմիկ արտահայտությամբ քողարկած, ան իր հիացումը հայտնեց հայ ալեզարդ արքայի իմաստության, ձիրքին և անձնական բացառիկ արժանիքներուն։ Խոսեցավ Արտավազդի մեծահամբավ հոր՝ Մեծն Տիգրանի և Պոմպեոսի հետ անոր կնքած դաշինքի մասին։ Ինքն ալ, Անտոնիոս, ջերմ հավատացող էր հայ-հռոմ բարեկամության։ Ան կհավատար, թե Պարթևաստան հասարակաց թշնամին էր և ատոր ջախջախվիլը որքան Հռոմի, նույնքան ալ Հայաստանի համար շահարեր պիտի ըլլար։ Կըսեր, թե այս տարվա իր արշավանքը փորձառական առաջին քայլեր էին և թե հաջորդ տարին շատ ավելի ահեղ զորությամբ պիտի հարձակեր Պարթևաստանի վրա և վերջնականապես հաշվեհարդարի ենթարկեր բարբարոս թշնամին։

Այսպիսի գովասանք շռայլելե հետո Անտոնիոս իր միտքը չարչարող բուն հարցը ներկայացուց հայ թագավորին։ Որովհետև հաջորդ տարին Պարթևաստանի դեմ պիտի սկսեր աննախընթաց վիթխարի արշավանքը, որքա՜ն ծախք, հոգնություն և ժամանակ պիտի խնայվեր, եթե Արտավազդ արքան թույլ տար, որ հռոմեական բանակը ձմեռե Հայաստանի մեջ[22]։ Հրապուրիչ խոստումներ բրավ հայ թագավորին, կըսե Դիոն Կասսիոս, առանց հիշատակելու խոստումներուն բնույթը, թեև դժվար չէ կռահել։ Գլխավորը եղած պետք է ըլլար Ատրպատականի վիճելի հողերը և ավելին ալ հանձնել Արտավազդին, ինչպես նաև հայուն բաժին հանել թշնամիեն ստացվելիք ավարեն։

---

[20] Plut., Ant., 50.

[21] Նույն տեղում։

[22] Dion, XLIX, 31.

Յոթանասունամյա հայ թագավորը խոհական համբերությամբ մտիկ բրած ըլլալու էր իրմե ավելի քան քսան տարի փոքր հռոմայեցիին։ Մանոթ անոր վատ նկարագրին, միաժամանակ անոր ունկնդրած ատեն հիշած ըլլալու էր Օկտավիանոսե ստացած գաղտնի նամակները, որ Արտավազդը կզգուշացներ Անտոնիոսի հետ գործ ունենալե։

Հակառակ այս բացասական մտածումներուն, Արտավազդ, սակայն, ընդառաջ գնաց Անտոնիոսի խնդրանքին և թույլ տվավ, որ 60000-նոց հռոմեական բանակը մինչև հաջորդ գարուն մնա Հայաստանե։

Արտավազդի այս որոշումը իր գործած մեծագույն սխալն էր։ Ի՞նչ նկատումներ դրդեցին արքան այսպիսի ծանրակշիռ որոշում մը կայացնելու։ Ինք այնքան դյուրահավան չէր և ոչ ալ անբուժելի սնափառութենե վարակված՝ չըմբռնելու հռոմայեցիի գովասանքին սոսկական շողոքորթություն ըլլալը։ Մինակ ընդունելի բացատրություն այն է, թե Արտավազդ համոզվեցավ, որ Անտոնիոս իրապես մեծ հարձակում մը պիտի գործեր Ատրպատականի և Պարթևաստանի վրա հաջորդ դարնան, որը իր առաջին ձախողութենեն խրատված հավանաբար հաջողեր։

Հետո նկատի առնվելիք կետ մըն ալ այն էր, թե Անտոնիոսի խնդրանքը մերժելու պարագային եթե հռոմայեցին կամովին չի հեռանար Հայաստանեն, այդ ատեն Արտավազդ ստիպված էր հայ բանակը շարժման դնել, որ պիտի նշանակեր հայ-հռոմ պատերազմ։

Ուրեմն, երկու չարյաց փոքրագույնի տեսակետն էր, որ տուն տված կրնար ըլլալ Արտավազդի որոշման։ Ինչ ալ եղած ըլլա դրդապատճառը, ձախող որոշում մըն էր, և երբ հաջորդ տարին Արտավազդն իսկ կգիտակցեր իր սխալին, արդեն ուշ էր։

Հռոմեական լեգեոններ ամիսներով կազդուրվելե վերջ կխմբվեին ռազմագիտական կարևոր դիրքերու վրա։ Ի՞նչ պիտի բներ այդ բանակը հարուստ Հայաստանի մեջ, եթե երբեք Պարթևաստանի դեմ իրը թե ծրագրված մեծ արշավանքը տեղի չունենար։

Այդ բնավ տեղի չունեցավ։

Անտոնիոս չափազանց ուրախացած Արտավազդի նպաստավոր որոշումեն, անմիջապես պատրաստություն տեսավ մեկնելու Եգիպտոս և միանալու Կլեոպատրային։ Ան նախ պատգամատարներ փութացուց Հռոմ ավետելու, թե մեծ հաղթանակ տարած էր Պարթևաստանի վրա։ Այս սուտ լուրը կհաղորդեր կերևի այն ակնկալությամբ, որ Հռոմի բնակիչները հինք պիտի ողջունեն և փառաբանեն որպես Կրասոսի պարտության վրիժխնդիրը։

Փոխանակ ձմեռը զինվորներուն հետ Հայաստանի մեջ անցնելու, Անտոնիոս քանի մը լեգեոն հետը առած դեպի Սյուրիա ճամփա ինկավ։ Միաժամանակ լուր ղրկեց Կլեոպատրայի՝ որ իրեն միանա Բեյրութի և Սիդոնի միջև գտնվող «Սպիտակ գյուղ» կոչված տեղը։ Իր ճամփա ելլելուն ձմեռը արդեն սկսած էր և ձյունամրրիկներու մեջ 8000 զինվորի կորստյան պատճառ եղավ[23]։ Անհամբեր էր, կուզեր օր առաջ տեսնի իր տարփուհին, Խորենացիի բառերով՝ «...Անտոնիոս ձմեռանոց կերթար Եգիպտոս։ Ան կշտապեր հոն հասնիլ կնամոլ մարդու վավաշոտությամբ, վառված ցանկությամբ դեպի Կլեոպատրան, եգիպտացիներու թագուհին»[24]։

Ան կերթար հաղթական զորապետի հովեր առած և Սյուրիա հասնելուն «մտքի անբմբռնելի զարտուղությամբ մը ավելի հավակնոտ դարձավ քան առաջ, կարծես հաղթանակ շահած էր, որովհետև կրցած էր փախչիլ»[25]։

2. ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈԹԱՉ

Երբ երկու զինակիցներ իրենց ակնկալածեն շատ ավելի պատերազմական ավար ձեռք ձգեն, զայն բաժնելու համար հաճախ վեճ ու կռիվ կունենան։

Մար Արտավազդ և պարթև Հրահատ այսպիսի վեճի բռնվեցան հռոմայեցիներեն առնված ավարի բաժանման պատճառավ։ Մար Արտավազդ ամբաստանեց պարթևը ավարի մեծագույն մասը յուրացնելուն համար։ Կթվի թե մար Արտավազդ դյուրագրգիռ և բարկացկոտ մեկը եղած ըլլալու էր և Հրահատի դեմ իր արտահայտության սաստկությունը վերջեն իրեն իսկ երկյուղ ազդած, մտածելով թե Հրահատ զինք պատժելու ետևեն պիտի ըլլա և նույնիսկ զրկե զինք իր գահեն, կամ իր երկրեն հողամասեր գրավե, և թերևս ալ հայ Արտավազդի հետ դաշնակցելով՝ Ատրպատականի զլխուն գուլպա հյուսե։

---

[23] Plut., Ant., 51.

[24] Խորենացի, Բ, 21։

[25] Florus, IV, 10.

Մարդ ինքնապաշտպանության խորհուրդեն կլանված երկար մտմտուքի վերջ եզրակացուց, թե իրեն համար գալիք վտանգը չեզոքացնելու ապահովագույն կերպը Անտոնիոսի հետ զինակցիլն էր։ Զի՞ որ հռոմայեցին հաջորդ ամառ պիտի հարձակեր Պարթևաստանի վրա։ Ան որքան պիտի գնահատեր, եթե մարդ հեծելազունդեր իրեն հետ ըլլային։

Առանց ժամանակ կորսնցնելու մարդ Արտավազդ Անտոնիոսին դեսպան զրկեց Պոնտոսի թագավոր Պոլեմոնը, որ պատերազմական գերի ինկած էր իր ձեռքը, և զինակցություն առաջարկեց։ Ավելի բարեպատեհ առաջարկ մը Անտոնիոս հազիվ թե կրնար երևակայել։ Ինք, որ իր պարտության գլխավոր պատճառ կհամարեր բավականաչափ ձիավոր ուժեր չունենալը, ահավասիկ այժմ պիտի ունենար այդ ավելիով, և մարդ հեծելազորքն ալ քաջածանոթ էր պարթևներու կռվելու ձևին[26]։

Անտոնիոս այնքան ուրախացավ այս չակնկալված զինակցության առաջարկեն, որ ոչ միայն ընդունեց, այլ դեսպանն ալ Փոքր Հայքի թագավոր կարգեց։ Կուրախանար ոչ միայն պարթևական արշավանքի հաշվույն, այլ հայ թագավորի անձին դեմ ծրագիր մը կորոճար և Հայաստանի ոխերիմ թշնամիին իրեն հետ ըլլալը առավելություն մ'էր։

Անտոնիոս և զինք շրջապատած պնակալեզներ շարունակ կկրկնեին, թե հռոմայեցիներու պարտության միակ պատճառը Հայաստանի թագավորն էր։

Անտոնիոս ինքը, ավելի քան իր հացկատակները, կուզեր ձեռք ձգել Արտավազդ արքան։ Յուր աչքին այդ Հայաստանի վրա տարված զինվորական ջախջախիչ հաղթության համազոր բան մ'էր, և այդ պարագային իր սնափառությունը որքան պիտի փքանար «Հայաստանի հաղթող» մակդիրով, որ պիտի երևար իր դրամներուն վրա։

Ֆլորոս պատմիչը Անտոնիոսի փառասիրության մասին խոսելով՝ իր բառերը չի ծամծմեր։ Այնպիսի ուռուցիկ սնափառություն մը ուներ Անտոնիոս, կարև ան, որ իր արձաններուն տակ Աբամս և Նվիրատ անունները փորագրված տեսնելու համար, որպես սույն գետերու շրջակա երկիրները հաղթողի, ան առանց պատճառի, առանց նույնիսկ պատերազմական հայտարարության Հռոմի հետ խաղաղության դաշինք ունեցող Պարթևաստանի վրա կհարձակեր, ինչպես տարի մը վերջ ալ Հայաստանի, «կարծես թե զորապետի մը առաքինություններեն մին եղած ըլլար գաղտագողի և հանկարծական հարձակումներ կատարել ուրիշ ազգերու վրա»[27]։

Անտոնիոս Կլեոպատրայի առջև պարծենալիք հաղթանակի մը պետք ուներ։ Եվ ան որոշած էր, որ հայոց թագավորը ըլլա իր հաղթականի կառքին ետևեն եկող շղթայակիր վեհապետը։ Իր հաշիվներու մեջ մեծ տեղ ունէր նաև Հայաստանի բազմաթիվ ամրոցներու մեջ ամրարված հարստությունը ձեռք ձգելու գայթիչ հեռապատկերը։ Հիրավի, ի՜նչ բախտ, ինք, որ դեռ իր զինվորներուն պարտք ուներ, դեռ գալիք պատերազմներու (պարթևներու և Օկտավիանոսի դեմ) հսկայական ծախքերը ճարելու մասին պիտի մտածեր, ի՜նչ բախտ, եթե մեկ քարով երկու թռչուն զարներ՝ Արտավազդ և հայկական ոսկի։

Մեր այս պատմության աղբյուրներեն Դիոն Կասսիոս մյուսներեն ավելի մանրամասն կներկարագրե Անտոնիոսի հյուսած խարդավանական սադրանքներու ոստայնը։ Արտավազդ թագավորի հետ իր բանակցությանց ամբողջ ընթացքին Անտոնիոս անկեղծ և սրտացավ բարեկամի մը վերաբերումեն չի շեղեցավ, որուն միակ մտահոգությունն է գալիք մեծ արշավանքի համար իր մտերիմ Արտավազդի խորհուրդներեն օգտվիլ և գործակցության պայմաններ հարդարել։

Անտոնիոսի դեսպանը եկավ Արտավազդը Եգիպտոս հրավիրելու, որպեսզի երկուքը խորհրդակցին Պարթևաստանի դեմ մղվելիք պատերազմի մասին։ Արտավազդի միտքը կասկածը իյնալուն մերժեց Աղեքսանդրիա երթալու հրավերը։

Անտոնիոս իր առաջին փորձին ձախողելեն չի հուսահատեցավ։ Ան որոշած էր ամեն գնով ձեռք ձգել Արտավազդի անձը։ Բայց այդ «ամեն գնովի» մեջ Հայաստանի դեմ պատերազմ մը իր հաշվույն չէր դար։ Պատերազմը անակնկալներով լի բախտախաղ էր, չես գիտեր թե սկսածդ ինչպես կվերջանա։ Ան բազմածախս ալ բան է, մինչ Անտոնիոսի դանձարանը արդեն հյուծախտի ենթարկված էր։

Անտոնիոսի հաջորդ քայլը եղավ ամուսնական առաջարկ մը։ Հարսանիքին մեջ հարսին թագավոր հայրը ձերբակալել իր բազմապիսի շահատակություններով լի կյանքին հետաքրքրական դրվագ մը ալ կրնար հայթայթել։ Փեսացուն ո՞վ էր. Անտոնիոսի Կլեոպատրային ունեցած վեց տարեկան որդին՝ Աղեքսանդր։ Այս մանչուկին Անտոնիոս կուզեր հարս առնել Արտավազդ թագավորի մեկ աղջիկը։ Հարսնացուին ոչ անունը գիտենք, ոչ ալ տարիքը, բայց եթե

[26] Plut., Ant., 52; Dion., XLIX, 33.
[27] Florus, IV. 10.

փեսա բլլալիքը վեց տարեկան էր, հարսնացուն ալ այդ տարիքի կամ քիչ մը ավելի դեռատի բլլալու էր։

Արտավազդ մերժեց այս առաջարկն ալ։ Բայց այդ Անտոնիոսը իր մտադրութենեն չէր կրնար շեղեցնել։ Ու ահա Դելլիոսը, Անտոնիոսի ցոփ կենցաղավարության հաճոյակատար ընկերը, Հայաստան կուգար թանկագին նվերներով ծաներաբեռն, որոնք պիտի մատուցաներ հայ արքային։ Արտավազդը բարի պիտք է բլլար Անտոնիոսի հետ տեսակցություն մը ունենալու և խորհրդակցելու մեծ արշավանքի մասին։ Ժամանակ կորսնցնելու չէր։ Արդեն 34-ի գարունը շուտով կուգար և Անտոնիոսն ալ շարժման դրած էր իր բանակը՝ Եգիպտոսեն մեկնելու հյուսիս։

Դելլիոս պատեհապաշտ և ճարպիկ հացկատակի կատարյալ տիպար մ'էր, այն հնարամիտ լեզվանի շողոքորթներեն, որոնք դիտեն իրենց խոսքերը համոզիչ անկեղծության քողով պարուրել։ Իր այս կարողության կպարտեր առանց դժվարության կողմ փոխելը։ Այսպես, օրինակ, ատենոք Դոլաբելլայի կողմնակից եղած էր, որ Անտոնիոսի թշնամի Կիկերոնի փեսան էր։ Հետո զայն ձգելով կանցներ Կասսիոսի կողմը։ Ապա Կասսիոսեն դարձավ և միացավ Անտոնիոսի։ Եվ, վերջապես, շատ չանցած, երբ կհամոզվեր թե Անտոնիոսի դատը անհույս է, կանցներ Օկտավիանոսի կողմը։

Դելլիոս միմիայն հայ թագավորին հետ բանակցություններով չի զոհացավ։ Հայ նախարարներն ոմանց հետ (անշուշտ ընտրովի) գաղտնի հարաբերություն մշակեց։ Կաշառք, հրապուրիչ խոստումներ, փառասեր նախարարներեն քանիները իրեն քաշեց։ Հայոց պատմության այս շեշտված երևույթը, ուր նախարարներ մեկ կամ մյուս օտար տերության թմբուկը կզարնեն, և որը դարեր շարունակ այնքան բախտորոշ անդրադարձում պիտի ունենար Հայաստանի ճակատագրին, այս ծաներակշիռ երևույթը կսկսի Արտավազդ թագավորի վերջին օրերուն։ Արտավազդեն առաջ, Տիգրանի օրով, կամ անկե ալ առաջ նման երևույթ չարձանագրեր պատմությունը։

Արտավազդի կասկածը կշարունակեր չարչարել իր միտքը։ Ոչ Դելլիոսի ըսածները, ոչ Անտոնիոսի բարեկամական զգացումներով զեղուն նամակները կրցան փարատել այդ։

Հանկարծ լուր եկավ թե Անտոնիոս իր բանակով հասած էր Նիկոպոլիս (Շապին Գարահիսար)։ Միաժամանակ Հայաստանի մէջ գտնվող լեգեոնները, որ ամբողջ ձմեռը հոն անցուցած էին, սպառնական խլրտումներ ցույց կուտային։

Անտոնիոս Նիկոպոլիս դադար չառավ, այլ շարունակեց ճամփան դեպի Արաքս գետ, դեպի Հայաստանի մայրաքաղաք Արտաշատ։ Նույնիսկ այս դանդաղ հառաջխաղացքի ընթացքին Անտոնիոսի պատգամաբերները իր մտերմական նամակները և նվերները կբերեին Արտավազդին, զգացնելու իրեն, թե եղածը հայ թագավորի դեմ թշնամական արարք մը չէ բնավ։ Կխորհիս, թե Անտոնիոս դեպի Արտաշատ դիմելով պարզապես ըսել կուզե արքային (հետագա դարերու ասացվածք մը փոխ առնելով). «Եթե լեռ-Արտավազդը Մուհամմետ-Անտոնիոսին չի գար, Մուհամմետ-Անտոնիոսը լեռ-Արտավազդին կերթա»։

Հայ ավագանիեն անոնք, որ գաղտնաբար Անտոնիոսի հաշվույն կգործեին, այլևս կրկնապատկեցին իրենց ստիպումը, թե Արտավազդ երթա Անտոնիոսի մոտ և այդ քայլով փրկե փարթամ մայրաքաղաքը բազմահազար լեգեոնականներու ներկայությենեն։ Եթե Արտավազդ պատերազմի պիտի չի մտներ Անտոնիոսի դեմ, այդ պարագային վտանգավոր էր հռոմեական բանակի մը Արտաշատ մտնելը։

Հավանաբար հիշած էին, թե ստեղծված այս դժվարին կացությունը այնքան նման էր երեսուն տարի առաջ Պոմպեոսի դեպի Արտաշատ արշավելուն, երբ Տիգրան ինքնակամ կերթար Պոմպեոսի բանակատեղին և երկուքը իրարու հետ հասկացողության կուգային, բարեկամական դաշինք կկնքվեր, և Տիգրան զոհ կվերադառնար իր մայրաքաղաքը, որը փրկած էր հռոմեական բանակի պաշարումեն։

Արտավազդ արքան հետևելու էր իր մեծանուն հոր օրինակին, կպնդեին, եթե կուզեր հայ-հռոմեական պատերազմ մը արգիլել։ Անոնք սակայն կմոռնային մեկ բան. Անտոնիոս Պոմպեոս չէր։

Ալեզարդ արքան ճարահատ գնաց Անտոնիոսի մոտ։

Այս մեկ «պատերազմը» հռոմայեցին կրնար աքլորային գոռոզությամբ հռչակել, թե ինք շահած էր։ Եվ այնպես ալ հռչակեց ու գրամ հանեց այս մեծ «հաղթանակի» հիշատակը հավերժացնելու։

Անտոնիոս հայտնեց թագավորին, թե իր «հյուրը» պիտի ըլլար։ Սա տարբերությամբ սակայն. «հյուրը» պիտի չի կրնար իր մայրաքաղաքը վերադառնալ։ Անտոնիոսի բանտարկյալն էր։ Եվ եթե անմիջապես արքան շղթայի չի զարկավ, պատճառը ոչ թե մարդասիրական անխաթար ջիղի մը գոյությունն էր Անտոնիոսի մեջ, այլ դանձեր ձեռք ձգելու ավազակարարո ախորժակ մը։

Անտոնիոս գիտեր, որ Հայաստանի կարգ մը անառիկ ամրոցներուն մեջ պետական դանձեր կպահվեին, և ան ինքզինք կհամոզեր, թե Արտավազդը հետը տանելով մեկ ամրոցեն մյուսը, դյուրությամբ պիտի տիրանար ոսկիին։ Սակայն բերդապահներ ի տես իրենց արքայի վիճակին սրտմտած, մերժեցին ոչ միայն Անտոնիոսի դիմումը, այլև անկե բռնադատված Արտավազդի խոսքերը, ու չի հանձնեցին դանձերը։ Որով եթե Անտոնիոս կուզեր տիրանալ անոնց, պետք է դինու զորությամբ կողոպտեր։

Արտավազդ թագավորի այս կերպ արդելակումը ընդվզեցուց հայերը։ Անտոնիոս տեղացիներու հուզումը զսպելու մտոք հայտարարեց, թե ինք թագավորը չէ ձերբակալած, այլ անոր անձին ապահովության համար իր պաշտպանության տակ առած էր զայն և թե իր այս ծառայության համար էր, որ ինք հայ ժողովրդեն դրամ կպահանջեր։

Դրամ պահանջելու այս նենգամիտ խարերա ձևը որքա՞ն հատկանշական է և կոպտե Անտոնիոսի տգմուտ նկարագրին։ Հավանաբար հայ ժողովուրդեն դրամական այս պահանջը բրած ատեն հիշած ըլլալու էր տարիներ առաջ Աթենքի մեջ բրած ճարպիկ ավազակությունը։ Աթենացիներ շողոքորթությամբ դինք կոչեցին երիտասարդ Բաքոս աստված և Միներվա աստվածուհին իրեն նշանեցին։ Անտոնիոս բսավ թե ինք զոհ էր նշանտուքեն և պիտի ամուսնանար Միներվային, բայց քաղաքացիներեն պահանջեց, և ստացավ, մեկ միլիոն տրախմա... որպես հարսի օժիտ[28]։

Իրենց ալեզարդ արքայի այսպես խարերայությամբ բռնվիլը խառնաշփոթություն հառաջ բերավ Հայաստանի մեջ։ Արտավազդի հետ էր յուր կիներ և երեք որդիներեն երկուքը, Տիգրաս և Արտավազդ։ Անդրանիկը՝ Արտաշես հաջողած էր փախուստ տալ և հայերու կողմե որպես նոր թագավոր ճանչցված, կպատրաստվեր դիմադրել հռոմայեցիներուն։

Այս շփոթ կացութենեն օգտվելով Անտոնիոս իր ուժերը շարժման մեջ դրավ Հայաստանի դանձերը կողոպտելու։ Այլևս հռոմեական լեգեոնները բանակ մը չէին, այլ հսկա ավազակային արշավախումբ մը։ Տաճարներն իսկ զերծ չի մնացին կողոպտիչի ճիրաններեն, նույնիսկ ամենանվիրակներ՝ Անահիտի տաճարը Եկեղյաց գավառի Երիզա ավանին մեջ։ Անտոնիոս և իր մարդիկը գիտեին, թե հոն կգտնվեր Արևելքի մեջ հռչակ հանած զուտ ոսկիե արձանը աստվածուհիին։ Այդ ինքնին ահագին հարստություն էր, առանց հաշվի առնելու տաճարի մյուս դանձերը։

Կարժե խոսիլ Անահիտի այս արձանի մասին։ Պլինիոս կրսե, թե առաջին արձանը, շինված զուտ ոսկիե, որ կկոչվի «Զուտ-մրճահարության գործ» (holosphratae) զանազանելու այն արձաններեն որ ձուլածո են և մեջը պարապ, կանգնված էր Անահիտ աստվածուհվո մեջյանին մեջ։ Ու այս առթիվ կհիշե մի ջադեպ մը։ Տարիներ վերջ, բռնռնիացի վեթերան մը, որ Անտոնիոսի բանակին մեջ գտնված էր, Օգոստոս կայսրը ճաշի կհրավիրե։ Անահիտի արձանին խոսքը ըլլալուն, Օգոստոս հարցուց իր հյուրընկալին, թե արդյոք գիտե՞ր, որ առաջին անձը, որ արձանին վրա հարձակած էր, աչքերը կուրցած էին, ապա անդամալույծ եղած և հետո մեռած։ Բռնռնիացին պատասխանեց, թե այդ իսկ վայրկյանին Օգոստոսի հրամցված ճաշկերույթը Անահիտ աստվածուհվո մեկ սրունքեն կուգար, որովհետև ինքն էր այն անձը, որ արձանին վրա նախահարձակ եղած էր և իր ամբողջ հարստություն կպարտեր այդ հափշտակված ոսկի սրունքի կտորին[29]։

Աստվածուհիին ոսկի արձանը նորեն շինված ըլլալու էր, որ Ագաթանգեղոս Անահիտի ակնարկելուն կկոչե. «Ոսկեմայր ոսկեծին ոսկեհատ դիք»։

Անտոնիոս հայ թագավորը արծաթե շղթայի զարկած, արքայական ընտանիքեն իր ձեռքը անցած անդամներն ալ հետը առնելով, ճամփա կելնար դեպի Աղեքսանդրիա, այս մեծ «հաղթանակը» տոնելու համար խենեշ ցուցադրություն մը սարքելու։

---

[28] Dion, XLVIII, 39.
[29] Pliny, Nat. Hist., XXXIII, 24.

3. ԵՂԵՌՆԸ

Անտոնիոսի ուրախությունը սահման չուներ։ Արևելքի ամենամեծ թագավորը, ի բաց առյալ Պարթևը, Արտավազդ, Հայաստանի արքան, ահավասիկ իր «պատերազմական» գերին էր։ Ահագին ավար ձևոք ձգած էր և բազմահազար հայ գերիներ։ Այսպիսի մեծ հաղթանակ մը պետք է շառաչուն տոնակատարությամբ աշխարհի ծանուցաներ։

Ան իրմե առաջ Աղեքսանդրիա ղրկեց հայ գերիներու բազմությունը և անոնց հետ միասին Արտավազդ թագավորը, իր թագուհին և երկու զավակները՝ Տիգրան և Արտավազդ։

Ճամփան Անտոնիոսի մարդիկը ջանացին համոզել ալևոր թագավորը, թե Աղեքսանդրիոյ մեջ տեղի ունենալիք մեծ շքանցքին, երբ Արտավազդ և իր ընտանիքի անդամները ներկայանան Կլեոպատրային, անոնք պետք է ծնրադրեն անոր առջև և ողջունեն Կլեոպատրան որպես «թագուհի»։ Թագավորը և իրենները բացարձակապես մերժեցին։ Կլեոպատրայի կենցաղին և նկարագրին քաջածանոթ ըլլալուն Արտավազդ իր վարկին, անունին և արժանապատվության անարգանք համարեց ծնրադրել և թագուհի տիտղոսով ողջունել անոր։

Անտոնիոսի մարդիկը պնդեցին, աղաչեցին, մեծամեծ խոստումներ ըրին, արքան հուսադրեցին մոտալուտ ազատության հույսով, եթե միայն ան համակերպեր և կատարեր Անտոնիոսի այս առաջարկը։ Ճարահատ անոնք նույնիսկ սպառնացին Արտավազդի, ցույց տալով թե տանջանքներու պիտի երթարկվին ինք և իրենները, թերևս ալ սպանվին եթե համառին։ Խոստում և սպառնալիք հավասարապես անզոր եղան անդրդվելի արքան համոզելու[30]։

Անտոնիոս Աղեքսանդրիա մուտ գործեց շռնդալի ցույցերով։ Ան կազմակերպեց հաղթանակի շքանցք։ Իր այս մեկ արարքը սակայն մեծ դայթակղություն և զզվանք կպատճառեր Հռոմի քաղաքացիներուն։

Հռոմայեցի հաղթական հրամանատարի մը համար չի կար ավելի մեծ պատիվ, քան Ծերակույտի կողմե իրեն քվեարկված հաղթանակի շքանցքը (Triumph), որ միմիայն Հռոմ քաղաքի մեջ տեղի կունենար և ուր բախտավոր հրամանատարի առած գերիները, ավարը, զորքերը կանցնեին երկար շարքով, բազմահազար հանդիսատեսներու ուրախ բացագանչություններու ընդմեջեն։

Հռոմայեցիներու այս «պատվավոր և նվիրական հանդիսավոր արարողությունը» Հռոմի մեջ եմացվելուն, մեծ գայրույթ հառաջացուց Անտոնիոսի դեմ[31]։ Ի՞նչ կնշանակեր այս։ Անտոնիոս Աղեքսանդրիան մի՞թե երկրորդ Հռոմ կուզեր ընել։

Անտոնիոս շլացուցիչ բեմադրություն մը սարքեց։ Քաղաքի մեծ հրապարակին մեջտեղը արծաթապատ ամբիոնի մը վրա զետեղված գահավորակին բազմած էր Կլեոպատրան՝ հագված Իսիս աստվածուհիի ակնախտիղ տարազով։ Ահա կանցներ երկար շարքը հայ զինվորներու, որոնք Անտոնիոս գերի առած էր։ Հետո կանցնեին Հայաստանն կողոպտված գանձերը կրող կառքերը։ Սոնքացող «առյուծը» թերևս կխորհեր, թե երբ Արտավազդ ներկայանար իրեն և Կլեոպատրային, կամ ազդված անոնց շքեղազարդ հաղուստ-կապուստեն, կամ որևէ պատճառաբանությամբ միտքը փոխե և ակնկալված ստրկային հարգանքը կմատուցանե Կլեոպատրային։ Հանդիսականներն ալ ամբողջ աչք կտրած էին տեսնելու թե Հայաստանի թագավորը ինչպես պիտի երկրպագեր իրենց թագուհիին։ Ահա կուգար թագավորը իր ընտանիքի անդամներով։ Անտոնիոս անոր արծաթ շղթաները հանել տված էր և տեղը ոսկի շղթայով անոր թևերը կաշկանդած, ցույց տալու Կլեոպատրային, թե ինչպիսի վեհափառ գերի մը նվեր կրերեր իրեն։ Արտավազդ մոտեցավ ամբիոնին ուր բազմած էր շնաշխարհիկ զույգը։ Հայը իր սպիտակահեր գլուխը բարձրացնած շեշտակի նայեցավ Իսիսի տարազով պճնված կնոջ և զայն կոչեց իր անունով, Կլեոպատրա։ Հայ թագուհին և երկու արքայորդիներն ալ իրեն օրինակին հետևեցան։ Թագավորական ընտանիքի խրոխտ կեցվածքը շատերուն հիացում պատճառեց։ Բայց Անտոնիոսի և Կլեոպատրայի մանկլավիկները խոշտանգումի և չարչարանքի ենթարկեցին Արտավազդը և իրենները՝ Եգիպտոսի թագուհիին հանդեպ այդպես «անպատկառ» վարվելնուն համար[32]։

Հայտնի է, որ շողոքորթներե շրջապատված Անտոնիոսի շրջանակին մեջ Կլեոպատրան որպես թագուհի ողջունելը նախապայման էր այս զույգի շնորհներուն արժանանալու։ Ու եթե գտնվեր մեկը, որ բարոյական այնքան մը ողնահար ցույց տար և մերժեր Կլեոպատրան հարգել ըստ ցուցմանց, այնպիսին գաղտնի հիացումի առարկա կըլլար։ Այսպես, օրինակ, Գնեոս

[30] Dion, XLIX, 40.
[31] Plut., Ant., 40.
[32] Dion, XLIX, 40.

Դոմիտիոս, որ մինակը եղած էր Անտոնիոսի հետևորդներուն մեջ, որ մերժեց այդ կինը թագուհի կոչել, և դզված Անտոնիոսի և իր շրջապատի այլասերած միջավայրեն, իր կյանքը վտանգելով փախուստ տվավ և միացավ Օկտավիանոսի[33]։

Անտոնիոս քաղաքի հսկա դիմնպիոնը եգիպտական ամբոխով լեցուց և սկսավ երկիրներու բախտը տնօրինել։ Հոս ալ արծաթապատ ամբիոնի վրա երկու ոսկյա գահ դնել տվավ, մեկը իրեն, մյուսը Կլեոպատրային։ Պաշտոնական հայտարարությամբ ան Կլեոպատրան հռչակեց թագուհի ոչ միայն Եգիպտոսի, այլ նաև Լիբիայի, Հարավային Սյուրիո և Կիպրոսի։ Հետո ոտքի կանգնեցուց Կլեոպատրայեն ունեցած երկու որդիները՝ Աղեքսանդր (վեց տարեկան) և Պտղոմեոս (չորս տարեկան), որոնցմե Աղեքսանդրին՝ հագցուց Հայաստանի թագավորական տարազ, Պտղոմեոսին՝ Սյուրիո արքայական հագուստ։ Երկու մանչուկները հռչակվեցան արքայից-արքաներ։ Աղեքսանդրին տվավ Հայաստանը, Ատրպատականը, Պարթևաստանը, մինչև Հընդկաստան։ Պտղոմեոս ալ թագավոր պիտի ըլլար Սյուրիայեն մինչև Մարմարա ծով տարածվող երկիրներուն։ Այս կրկնային ցույցի մեջ պակաս բան մը չի ձգելու համար, հայ գերիներև պատվո պահակ մը կտրվեր Աղեքսանդրին, իսկ մակեդոնացիներե՝ պահակ մըն ալ մյուս մանչին[34]։ Պլուտարքոս ամբարտավան և ողբերգական բառերը կգործածե եղածը բնորոշելու։ Այդքանով ալ գոհանանք։

Այժմ Արտավազդ թագավորի համար սկսան կալանավորի տառապագին օրեր Աղեքսանդրիո վատարարո միջավայրին մեջ, ուր իր թագուհիին և երկու արքայորդիներուն հպարտ և անվախ կեցվածքը իրենց վրա հրավիրեց անարդանք և խոշտանգում։

Իր այդ դժբախտ օրերուն ալևոր Արտավազդ ալ ավելի մոտեն կհասկնար թե Անտոնիոս «մոռնալով իր հայրենիքը, իր անունը, հռոմեական տարազը և զինանշանը, բոլորովին այլասերեցավ թե՛ խորհրդով, թե՛ զգացումով, և թե՛ հագուստով ու դարձավ հրեշ մը»[35]։

Աղեքսանդրիո մեջ Անտոնիոսի արարքները Օկտավիանոս Մերկուրին և երբեմն Հռոմի ժողովրդին կտեղեկացներ, Անտոնիոսի դեմ ընդվզում հառաջացնելու[36]։

Արտավազդի աչքին ազատության միակ հույս կմնար Անտոնիոսի և Օկտավիանոսի միջև պատերազմ մը, ուր Օկտավիանոս հաղթական դուրս գար։ Թագավորը կհիշեր Օկտավիանոսի դաղտնի բանագնացները և նամակները, ամենքն ալ Անտոնիոսի դեմ։ Եթե Օկտավիանոս հաղթեր, Արտավազդ վստահ էր, որ ինք պիտի ազատվեր իր գերութենեն և վերադառնար Հայաստան՝ բազմելու պապենական գահին։ Արտավազդ և իրեններ ամեն կերպ կջանային տեղեկություն հավաքել հռոմեական անցուդարձներու, որ ըսել է՝ Անտոնիոսի և Օկտավիանոսի երկուստեք մղած կատաղի պայքարին և պատերազմական պատրաստություններուն։

Դեպքերուն ընթացքը կարագանար։ Պրոպագանդայի աղորիքը կաղար շղթեպինդ։ Երկուստեք ամբաստանություններ Հռոմի կյանքը կհուզեին։ Անտոնիոս Կլեոպատրայի հետ Եփեսոս եկավ հսկա նավատորմիղով մը, որուն մեծագույն մասը Կլեոպատրան տված էր։ Ամիսներե վերջ ան անցավ Հունաստան։ Կանիդիոս Հայաստան դտնված լեգեոնները և մարական հեծելագունդեր բերավ։

Օկտավիանոս ալ մխրճվեցավ տենդագին պատրաստության։ Պնդելով, որ Անտոնիոս Կլեոպատրայի սոսկական մեկ գործակատարն է, ան պաշտոնապես պատերազմ հայտարարել տվավ Կլեոպատրայի դեմ։ Հսկա նավատորմիղ մըն ալ հավաքեց և շարունակեց իր աշխատանքը Հռոմի ժողովուրդը և իր բանակայինները Անտոնիոսի դեմ լարելու։ «...Այս մարդը, որ ձգեր է իր նախնիքներուն կենցաղը և սովորությունները, կապկեր է բոլոր օտար և բարբարոս վարք, որ մեզի կամ օրենքներու կամ իր հայրերուն աստվածները կանպատվե... Թող ոչ ոք հետ այսու զինք հռոմայեցի կոչե, այլ եգիպտացի։ Մի կոչեք զինք Անտոնիոս, այլ Սերապիոն... Ինչո՞ւ որեէ մեկը վախնալու է անկե։ Յուր ֆիզիքակա՞ն հարմարությունը։ Բայց ան արդեն կնամարդի բան մը դարձած է։ Իր մտայի՞ն կարողությունը։ Բայց արդեն իդացած է և ինքզինքը մաշեցուցած անբնական տոփանքով։ Դեպի աստվածներ ցուցուցած երկյուղածությա՞մբ։ Բայց անոնց դեմ պատերազմ կմղե, ինչպես նաև իր հայրենիքին դեմ։ Յուր հավատարմությունը դեպի իր դաշնակիցնե՞ը։ Բայց ո՞վ չի դիտեր թե ինչպես ան խարեց և բանտարկեց հայը...»[37]։

---

[33] Velllus Paterculus, II, 84.
[34] Plut., Ant., 54; Dion, XLIX, 41.
[35] Florus, IV, 10.
[36] Plut., Ant., 55.
[37] Dion, L, 25, 27.

Չենք կամենար ավելի մանրամասնելու երկու հռոմայեցիներու միջև մղված պատերազմը։ 31 թվականի սեպտեմբերի 2-ին Ակտիումի ծովախորշին մեջ տեղի ունեցած մեծ նավամարտին, կովի տաք պահուն Կլեոպատրան իր Եգիպտական նավերուն նահանջի նշանը տվավ և շուտով դեպի Աղեքսանդրիա փախուստի ճամփան բռնեց։ Անտոնիոս, որ անոր տված նշանը չէր տեսած, կարծելով թե խուճապ ինկեր է, ինքն ալ փախավ։ Օկտավիանոսի հաղթանակը կատարյալ էր։

Կլեոպատրան կշտապեր ժամ առաջ Աղեքսանդրիա հասնիլ դեռ հոն մեկը չի լսած Ակտիումի մեջ պատահած աղետի մասին։ Ան քաղաքական հակառակորդներ ուներ և դիտեր, թե անոնք իր հաշիվը կմաքրեին եթե իմանային Օկտավիանոսի հաղթանակը։ Երեք բան պետք է ըներ անմիջապես։ Իր քաղաքական թշնամիները մեջտեղեն վերցնել։ Դաշնակիցներ ճարել ամեն գնով։ Եվ դրամ, դրամ, դրամ։ Եթե Օկտավիանոս համարձակեր Եգիպտոս դալ, ան պիտի պաշտպաներ իր դահը, Պտղոմեոսյան հարստության դարավոր դահը։

Երբ իր նավերը Աղեքսանդրիա մոտեցան, Կլեոպատրան հրամայեց նավերու ցուցակները և կայմերը ծաղկեպսակներով զարդարել և նվագարաններու ընկերակցությամբ նավաստիները հաղթության երգեր երգելով մտան նավահանգիստ, այս կերպով եգիպտացիներուն իմացնելու, թե ինք և Անտոնիոս հաղթական դուրս եկած էին մեծ պատերազմեն։

Կլեոպատրան քաղաք հասնելուն անմիջապես իր զահիները գործի դրավ։ Իր թշնամիները և այն հարուստները, որ դինք կատեին, մահվան դատապարտեց։ Մահապարտներու կալվածները յուրացուց և նույնիսկ սրբավայրերու հարստությունը կողոպտեց։ Միաժամանակ բանակը կազմակերպեց։

Դաշնակիցներ։ Ատրպատականի թագավոր մար Արտավազդը կրնար մեծակ բանակ մը տրամադրել իրեն։ Կլեոպատրան ի՞նչ կրնար ընել զոհացնելու մարը։ Մարին ատելությունը հայ Արտավազդին. Օկտավիանոս, հավանաբար, վերջ ի վերջո ազատեր հայը։ Մարը որքա՞ն զոհ պիտի ըլլար, եթե իր այս ոխերիմ թշնամին Հայաստան դարձը անկարելի դառնար։

Աշնան օր մը խափշիկ դահճապետը եկավ Արտավազդի մոտ և անոր գլուխը կտրեց տանելու Կլեոպատրային, որ այդ գլուխը ղրկեր մար Արտավազդին[38]։

Կլեոպատրան չդիտեր, թե երբ հայ արքայի գլուխը կղրկեր մար Արտավազդին, այս վերջինը փախստական հեռացած էր երկրեն։

Ահա այսպիսի ողբերգական վախճան կունենար Արտավազդ, որուն անգլուխ դիակն իսկ հայրենի գերեզման պիտի չունենար։

АРТАВАЗД ВТОРОЙ И АНТОНИЙ

ГРАНТ К. АРМЕН (Калифорния, США)

(Резюме)

В статье освещен один из наиболее драматических моментов истории древней Армении — парфянский поход Марка Антония (36 г. до н. э.) и последствия этого похода для Армении.

Марк Антоний, обосновавшийся на востоке Римской республики и женившийся на египетской царице Клеопатре, вынашивал планы широких завоеваний. Двинувшись без достаточной подготовки на парфян, он избрал путь через Армению. Артавазд второй, царь Армении, должен был сориентироваться в опасной обстановке, осложнявшейся вдобавок нажимом Октавиана — политического врага Антония. Артавазд избрал путь лавирования между Антонием и Парфией — путь ненадежный, но, по-видимому, единственно возможный в то время. Разгром, который парфяне, в союзе с Атропатеной, учинили над Антонием, последний выместил на Артавазде, объявив его изменником за такие деяния, которые были направлены лишь на спасение Армении — за отказ связать свою судьбу с судьбой Антония.

[38] Dion, LI, 5.

Антоний захватил Артавазда в плен и в серебряных оковах увез вместе с семьей в Александрию, чтобы протащить его во время триумфа за своей колесницей и тем создать видимость победы если не над Парфией, то хотя бы над Арменией. Артавазд и его семья, несмотря на унижения и пытки, держались достойным образом, о чем с похвалой рассказывают античные авторы. После поражения Антония и Клеопатры в битве с Октавианом при Акции (31 г. до н. э.) Артавазд был казнен по приказу Клеопатры.

Время правления Артавазда II для Армении во внешнеполитическом отношении является переломным пунктом. Именно в это время начался тот долгий период в истории Армении, когда она была зажата между двумя мощными, значительно превосходившими ее по силе государствами—Римом и Парфией и когда многое в жизни Армении определялось соперничеством этих государств и состоянием их взаимоотношений.